ԲԱԲԿԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց: Կյանքի 92-րդ տարում վախճանվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Նիկոլայի Առաքելյանը: Բ. Ն. Առաքելյանը ծնվել է 1912 թ. Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղում: 1930-ական թվականների կեսերին սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, այնուհետև 1936-ին դարձել է Լենինգրադի համալսարանի ազատ ունկնդիր: 1938-ին ընդունվել է Արմֆանի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան և ուսումնառության մի մասն անցկացրել Լենինգրադում, ակադեմիկոս Հ. Օրբելու գիտական ղեկավարությամբ: 1941-ին պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն նվիրված հայ միջնադարյան պատկերաքանդակների հետազոտությանը: 1942-ին զորակոչվում է բանակ, մինչև վերջ մասնակցում Մեծ Հայրենականին, պարգևատրվում տարբեր շքանշաններով և մեդալներով: 1946-ին վերադառնալով Երևան նա իր ողջ գիտակցական կյանքը նվիրում է Հայաստանի հնագիտության, պատմության, միջնադարյան քաղաքների և արհեստների, հայ հին արվեստի և մշակույթի գիտական հետազոտությանը: Լինելով տաղանդավոր գիտնական և գիտության հմուտ կազմակերպիչ, նա իր մեծ լուման է ներդրել Հայաստանում հնագիտական աշխատանքների կազմակերպման և զարգացման գործում, միաժամանակ նպաստել հայագիտական ուսումնասիրությունների կազմակերպմանը: 1947-ին եղել է հասարակական գիտությունների «Տեղեկագիր» ամսագրի խմբագիրը, 1949-ից վարել է ԳԱ պատմության ինստիտուտի հնագիտության և վիմագրության բաժինները, երկար տարիներ ղեկավարել է Գառնիի, Արմավիրի, Հին Արտաշատի հնագիտական պեղումների աշխատանքները, 1959-ից սկսած, շուրջ 30 տարի նա եղել է իր իսկ հիմնադրած Հնագիտության և ազգագրության ինստիտուտի անվտիտոս տնօրեն և նրա նվիրական ջանքերի շնորհիվ ինստիտուտը վերածվել է հայա-

գիտական ուսումնասիրությունների մի ինքնատիպ կենտրոնի ձեռք բերելով հեղինակություն և միջազգային ճանաչում:

1954-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Քաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դարերում» երկհատոր մենագրությունը և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան: 1957-ին նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում, 1968-ին ընտրվում է Հայաստանի ԳԱ թղթակից անդամ, իսկ 1974-ին ակադեմիկոս:

1982–1990 թթ. նա գլխավորել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության և տնտեսագիտության բաժանմունքի աշխատանքները՝ իր մեծ ավանդը ներդնելով հայ պատմագիտության զարգացման գործում: Նա հեղինակ է ավելի քան 120 գիտական մեծ ու փոքր աշխատությունների, ամենագործունյա հեղինակն է «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյա ակադեմիական հրատարակության: Աճեցրել ու դաստիարակել է հնագետ-պատմաբանների բազմաթիվ կադրեր, երկար տարիներ գլխավորել է գիտությունների ազգային ակադեմիայի մշակույթի հուշարձանների պահպանության գիտամեթոդական խորհուրդը: Նա մինչև իր արդաստվոր կյանքի ավարտը հանդիսանում էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի պատվավոր տնօրենը և մի քանի գիտական խորհուրդների անդամ: Նրա գիտական մեծ վաստակն ու ծառայությունները միշտ էլ գնահատվել են ըստ արժանվույն: Նա պետական մրցանակների դափնեկիր է և արժանացել է մի շարք շքանշանների ու պատվոգրերի:

Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի՝ այդ մեծանուն մարդու, գիտնականի, ազնիվ հայորդու հիշատակը միշտ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ